



22 օգոստոսի 2008թ.
ք. Երևան

№ 295-Ա

14 օգոստոսի 2008թ.
ք. Երևան

№ 151-Ա

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱ-
ԿՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԱՏՄԱՄԲ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» № 1278-Ն որոշման 15-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսության հասցվող վնասի հատուցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայանտառ» ՊՈԱԿ գլխավոր տնօրեն Մ. Մաթևոսյանին և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա. Գաբրիելյանին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն հրամանի հավելվածով նախատեսված անտառապատման աշխատանքներն առավելապես Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի շրջանակներում իրականացնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարար

Ա. Հարությունյան

Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարար

Ն. Գ.



Հավելված

ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2008թ. օգոստոսի 14-ի № 151-Ա համատեղ հրամանի

ՀՀ բնապահպանության նախարարի
2008թ. օգոստոսի 22-ի № 295-Ա համատեղ հրամանի

ԾՐԱԳԻՐ

ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԱՏՄԱՄԲ ԱՆՏԱՌԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) սահմանում է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի (այսուհետ՝ Հանքավայր) շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսության հասցվող վնասի հատուցման աշխատանքների իրականացման ընթացքը:

2. Ծրագրի ֆինանսավորումն իրականացնում է Հանքավայրի շահագործման հանքային իրավունքը կրող (այսուհետ՝ Լիցենզառու) կազմակերպությունը, որն ապահովում է Ծրագրին համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումը:

3. Ծրագրի շրջանակներում անտառապատումն ըստ տարիների իրականացվում է հետևյալ նվազագույն ծավալներով (հեկտար)՝

Ընդամենը	2008-2009 թթ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ. և հետագա տարիներ
714	102	24	18	26	26	24	20	20	20	20	18	396

2020թ. և հետագա տարիների համար Ծրագրի շրջանակներում անտառապատման տարեկան ծավալները ենթակա են սահմանման սույն կետում փոփոխություններ կատարելու միջոցով՝ հանքավայրի շահագործման ծրագրի 2-րդ փուլի վերաբերյալ աշխատանքային նախագծի օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննությունների իրականացումից հետո:

4. Ծրագիրն իրականացվում է, ըստ առաջնահերթության՝
- 1) Լոռու մարզի Թեղուտի և Շնողի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերում.
 - 2) Լոռու մարզի Թեղուտի և Շնողի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված հողերում.

3) Լոռու մարզի Թեղուտի և Շնողի գյուղական համայնքների վարչական սահմաններին հարակից համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերում.

4) Լոռու մարզի Թեղուտի և Շնողի գյուղական համայնքների վարչական սահմաններին հարակից՝ գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված հողերում.

5) Լոռու մարզի այլ համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերում.

6) Լոռու մարզի այլ վայրերում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված հողերում:

7) Հայաստանի Հանրապետության այլ վայրերում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված հողերում:

5. Ծրագիրն իրականացվում է Լիցենզառուի պատվերով մասնագիտացված կազմակերպության կողմից կազմված անտառապատման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հիման վրա, որը հաշվի է առնում անտառապատման ենթակա տարածքում կենսաբազմազանության ապահովման անհրաժեշտությունը և ներառում է՝

- 1) ընդհանուր բացատրագիր, սխեմաներ և քարտեզներ.
- 2) ծավալային աշխատանքների ամփոփագիր.
- 3) նախահաշիվ շուկայական գներով.

4) անտառապատման աշխատանքների համար ընտրված տարածքների նկարագրությունը: Ընդ որում, Նախագիծը մշակող կազմակերպության կողմից անտառապատման տարածքների ընտրությունը կատարվում է ըստ սույն Ծրագրի 4-րդ կետում թվարկված առաջնահերթության՝ հիմնվելով համապատասխան մարմիններից ստացված առաջարկությունների վրա:

6. Նախագիծը Ծրագրի 3-րդ կետով սահմանված յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կազմվում է ոչ ուշ, քան տվյալ ժամանակահատվածի ավարտից 15 ամիս առաջ, և կազմումից հետո մեկամսյա ժամկետում համաձայնեցվում և մեկական օրինակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություններին:

7. Ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով Ծրագրի 3-րդ կետով սահմանված յուրաքանչյուր ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ Ծրագրի 6-րդ կետով սահմանված կարգով Նախագծի համաձայնեցումից հետո երկշաբաթյա ժամկետում հայտարարվում է մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

8. Մրցույթի կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման հետ կապված աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Լիցենզառու ընկերության միջոցների հաշվին:

9. Մրցույթի հայտարարումն իրականացվում է սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով ձևավորված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով) կողմից, որն էլ ամփոփում է մրցույթի արդյունքները: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

10. Մրցութային հանձնաժողովը բաղկացած է վեց անդամից՝

1) Լիցենզառու ընկերությունից՝ երկու անձ.

2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից՝ երկու անձ.

3) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից՝ երկու անձ:

11. Մրցութային հանձնաժողովի անհատական կազմը և նախագահին հաստատում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը՝ մրցութային հանձնաժողովի ձևավորման անհրաժեշտության մասին Լիցենզառուի կողմից տրվող տեղեկացումների հիման վրա:

12. Մրցութային հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների առնվազն երեք քառորդը: Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում մրցութային հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

13. Մրցույթի անցկացման նպատակով Մրցութային հանձնաժողովը սահմանում է մրցույթի պայմանները, մասնավորապես՝

1) մրցույթին մասնակցելու համար նվազագույն պահանջները (համապատասխան ոլորտում փորձառություն, տեխնիկական հագեցվածություն, մասնագետներով ապահովվածություն և այլն).

2) մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը.

3) մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ձևն ու վայրը.

4) անտառապատման և տնկվող ծառերի խնամքին ներկայացվող պահանջները (մասնավորապես խնամքի տևողությունը, հաճախականությունը).

5) մրցույթի անցկացման ժամկետները և արդյունքների հրապարակման կարգը.

6) մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպություն հետ համապատասխան պայմանագիր կնքելու ժամկետները:

14. Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման նպատակով մրցութային հանձնաժողովը հիմք է ընդունում՝

1) հայտի համապատասխանությունը մրցույթի պայմաններին.

2) հայտում ներկայացված տվյալների արժանահավատությունը.

3) հայտով ներկայացված գնային առաջարկը (անտառապատվող տարածքի յուրաքանչյուր հեկտարի համար գինը, ներառյալ մինչև անտառի շարք տեղափոխելը խնամքի աշխատանքները):

15. Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպության և Լիցենզատուի միջև կնքում է պայմանագիր, որով սահմանվում են Ծրագրի շրջանակներում անտառապատման և խնամքի աշխատանքների դիմաց վճարման և կողմերի միջև այլ հարաբերությունները:

16. Սույն Ծրագրով սահմանված ժամկետներում Մրցույթ չկազմակերպելու կամ Մրցույթի արդյունքներով հաղթող չճանաչելու դեպքում Ծրագրով նախատեսված անտառապատման և խնամքի աշխատանքներն իրականացնում է Լիցենզատուն՝ ինքնուրույնաբար կամ իր որոշմամբ ընտրված կազմակերպության միջոցով:

17. Համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2008 թվականի փետրվարի 12-ի № 59-Ս և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2008 թվականի փետրվարի 21-ի № 34-Ս «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատման աշխատանքների իրականացման կարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատման աշխատանքների իրականացման կարգի» 16-րդ կետի համաձայն, հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատման արդյունքում օրենսդրությամբ սահմանված կարգով բնօգտագործման վճարի վճարումն իրականացնում է «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

18. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը յուրաքանչյուր տարվա վեգետացիայի ընթացքում կատարում է ուսումնասիրու-

թյուն՝ Ծրագրի շրջանակներում իրականացվող անտառապատման և խնամքի աշխատանքների ծավալի և ընթացքի վերաբերյալ:

19. Յուրաքանչյուր տարվա վեգետացիայի շրջանի ավարտին (նոյեմբեր ամսին) Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպությունը և Լիցենզառուն ամփոփում են նախորդ տարվա ընթացքում սույն Ծրագրին համապատասխան կատարված աշխատանքների արդյունքները՝ անտառապատման նախագծին համապատասխանությունը, տնկված ծառերի կայտղականությունը կամ պահպանվածությունը և դրա վերաբերյալ տեղեկանքը մեկամսյա ժամկետում ուղարկում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

20. Սույն Ծրագրիը կարող է փոփոխվել Լիցենզառուի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից համապատասխան փոփոխությունների հաստատմամբ: